Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 27-ի N 1007-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ՈՐՈՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ԳՐԱ-ՌՈՒՄՆԵՐ ԱՌԿԱ ՉԵՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ ԲԱՑՎԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված՝ տեղեկատվական համակարգում ներառված իրավաբանական անձանց, որոնց վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանում գրառումներ առկա չեն (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ իրավաբանական անձի հիմնադիրները կամ մասնակիցները ֆիզիկական անձինք են կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք), Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում բացված բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները սոցիալական բնույթի ծախսերի ֆինանսավորմանն ուղղելուն առնչվող հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով սոցիալական բնույթի ծախս է համարվում կենսաթոշակը, նպաստը, պարգևավճարը, պատվովճարը, հայրենիքին ակնառու ծառայություններ մատուցած անձանց դրամական պարգևատրումը, աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցումը, դրամական աջակցությունը, դրամական օժանդակությունը, դրամական օգնությունը և զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող ծախսերի հա-տուցումը (այսուհետ՝ սոցիալական ծախս):

3. Սույն կարգի 1-ին կետում նշված իրավաբանական անձի (այսուհետ՝ իրավաբանական անձ)՝ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերում բացված բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները սոցիալական բնույթի ծախսերի ֆինանսավորմանն ուղղելու համար այդ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը, ում տվյալներն արտացոլված են տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար), գրավոր դիմում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ներկայացնելով՝

1) դիմում, որում ներառվում են՝

ա. դիմողի՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե նա հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց,

բ. առևտրային բանկի անվանումը և այդ բանկում բացված՝ իրավաբանական անձի բանկային հաշվի համարը, որից նախատեսվում է կատարել սոցիալական ծախսը.

2) տեղեկանք՝ սոցիալական ծախսերի բնույթի վերաբերյալ, որում ներառվում են սոցիալական ծախսերի՝

ա. նպատակը, համառոտ նկարագրությունը (բնույթը),

բ. ֆինանսավորմամբ լուծվող սոցիալական խնդիրը,

գ. կից ներկայացվող էլեկտրոնային կրիչով տրամադրվող անձանց (այսուհետ՝ շահառու), ում նշանակվել է սոցիալական ծախսը, թիվը, վճարման ենթակա ընդհանուր գումարը.

3) էլեկտրոնային կրիչով (2 օրինակից, որոնցից մեկը պահվում է լիազոր մարմնում) շահառուների տվյալները, որոնք ներառում են յուրաքանչյուր շահառուի՝

ա. անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ

հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե նա հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց,

բ. առկայության դեպքում՝ շահառուի ներկայացուցչի (ում պետք է վճարել շահառուին նշանակված սոցիալական ծախսի գումարը) անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե նա հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց (այսուհետ՝ շահառուի ներկայացուցիչ),

գ. սոցիալական ծախսի տեսակը, վճարման ենթակա գումարի չափը,

դ. առկայության դեպքում՝ այն բանկային հաշվի համարը, որին պետք է փոխանցել սոցիալական ծախսի գումարը:

4. Սույն կարգի 3-րդ կետում նշված դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը (այդ թվում՝ էլեկտրոնային կրիչը) ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) միջոցով շահառուների (առկայության դեպքում՝ նաև նրա ներկայացուցչի) տվյալները համեմատում (համադրում) է բնակչության պետական ռեգիստրի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված՝ մահվան ակտերի գրանցման տվյալների հետ և կազմում է նույնականացված շահառուների ցուցակ, որում ներառվում է՝

1) շահառուի (առկայության դեպքում՝ նաև նրա ներկայացուցչի) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե նա հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց).

2) սոցիալական ծախսի տեսակը, վճարման ենթակա գումարի չափը.

3) առկայության դեպքում՝ այն բանկային հաշվի համարը, որին պետք է փոխանցել սոցիալական ծախսի գումարը:

5. Նույնականացված շահառուների ցուցակ չեն ներառվում այն շահառուի (առկայության դեպքում՝ նաև նրա ներկայացուցչի) տվյալները, որոնք սույն կարգի 4-րդ կետում նշված համեմատման (համադրման) օրվա դրությամբ՝ չեն նույնականացվում բնակչության պետական ռեգիստրի տվյալներով կամ ըստ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալների՝ մահացած են:

6. Լիազոր մարմինը՝

1) ստացված դիմումը, փաստաթղթերը (այդ թվում՝ էլեկտրոնային կրիչը) և նույնականացված շահառուների ցուցակն ուղարկում է Ազգային անվտանգության ծառայություն՝ դրանց ստույգության վերաբերյալ եզրակացություն (դրական կամ բացասական) ստանալու, անհրաժեշտության դեպքում՝ նույնականացված շահառուների ցուցակում փոփոխություններ կատարելու համար.

2) ստացված դիմումն ուղարկում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ գործակալություն)՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները ճշտելու համար:

7. Գործակալությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին տրամադրում է տեղեկատվություն՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները տեղեկատվական համակարգում արտացոլված լինելու կամ չլինելու վերաբերյալ:

8. Ազգային անվտանգության ծառայությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին տրամադրում է իր եզրակացությունը: Ընդ որում, եթե եզրակացությունը դրական է, ապա առկայության դեպքում տրամադրում է նաև առաջարկները նույնականացված շահառուների ցուցակում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

9. Ազգային անվտանգության ծառայության դրական եզրակացությունը և գործակալության՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները տեղեկատվական համակարգում արտացոլված լինելու մասին տեղեկատվությունը

ստանալուց հետո լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում նույնա-կանացված շահառուների ցուցակը (դրա վերաբերյալ սույն կարգի 8-րդ կետի համաձայն Ազգային անվտանգության ծառայությունից ստացված առաջարկների հաշվառմամբ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով) ծառայության միջոցով տրամադրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ այդ ցուցակում առկա բանկային հաշվի համարները ճշտելու, իսկ շահառուի անվամբ բանկային հաշվի համարի բացակայության կամ տրամադրված բանկային հաշվի համարի անճշտության դեպքում՝ շահառուի (առկայության դեպքում՝ նրա ներկայացուցչի) անվամբ թողարկված վճարային քարտերի բանկային հաշվի համարները, բացառությամբ Հայաստանի Հանրապե-տության քաղաքացիական օրենսգրքի համաձայն բացված հատուկ հաշիվների ստանալու համար:

10. Սույն կարգի 9-րդ կետում նշված տվյալները ստանալուց հետո 5 աշխա-տանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը CBANet միջբանկային համակարգչային ցանցի միջոցով ծառայությանը տրամադրում է տեղեկատվություն՝ նույնականացված շահառուների ցուցակում նշված բանկային հաշիվների համարների ճշտության կամ ոչ ճշտության վերաբերյալ, իսկ շահառուի անվամբ բանկային հաշվի համարի բացակայության կամ տրամադրված բանկային հաշվի համարի անճշտության դեպքում տրամադրում է շահառուի (առկայության դեպքում՝ նրա ներկայացուցչի) անվամբ թողարկված վճարային քարտերի բանկային հաշվի համարները:

11. Լիազոր մարմինը մերժում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը և այդ մասին տեղեկացնում է նրան, եթե՝

1) դիմումում ներառված չեն սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված բոլոր տվյալները՝ դիմումը ստանալուց (Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվելուց) հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում.

2) դիմումին կից ներկայացված չեն սույն կարգի 3-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված բոլոր փաստաթղթերը՝ դիմումը ստանալուց (Mulberry

փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվելուց) հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում.

3) սույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ գործակալությունից ստացվել է տեղեկատվություն՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի տվյալները տեղեկատվական համակարգում արտացոլված չլինելու վերաբերյալ՝ տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում.

4) սույն կարգի 8-րդ կետի համաձայն՝ ստացվել է Ազգային անվտանգության ծառայության բացասական եզրակացությունը՝ այն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում.

5) դիմումը ներկայացվել է սույն կարգի 16-րդ կետում նշված ժամկետից հետո:

12. Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը չմերժելու (բավարարելու) դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից սույն կարգի 10-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո ծառայությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 4-րդ կետով սահմանված կարգով կազմում է նույնականացված շահառուների վճարման ցուցակ և տրամադրում է լիազոր մարմնին և բանկին, որտեղ բացված է այդ իրավաբանական անձի բանկային հաշիվը (այսուհետ՝ բանկ):

13. Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի դիմումը չմերժելու (բավարարելու) դեպքում այդ մասին լիազոր մարմինը գրավոր տեղեկացնում (պատասխանում) է վերջինիս՝ տրամադրելով նույնականացված շահառուների վճարման ցուցակը:

14. Լիազոր մարմնի տրամադրած՝ դիմումը չմերժելու (բավարարելու) մասին սույն կարգի 13-րդ կետում նշված տեղեկատվությունը (պատասխանը) և նույնականացված շահառուների վճարման ցուցակն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը ներկայացնում է բանկ: Սույն կարգի շրջանակներում բանկը վճարումները կատարում է (գումարները փոխանցում է) բացառապես նույնականացված շահառուների վճարման ցուցակով: Վճարումները կատարելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում արդյունքների մասին բանկը տեղեկացնում է լիազոր մարմնին և իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարին:

15. Չնույնականացված շահառուին (առկայության դեպքում՝ նաև նրա ներկայացուցչի) նույնականացնելուց, շահառուի մահացած ներկայացուցչի տվյալները փոխելուց հետո սոցիալական ծախսեր կատարելու համար իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը սույն կարգով սահմանված կարգով կարող է նորից դիմել լիազոր մարմնին: Այս դեպքում դիմումին ընթացք է տրվում սույն կարգով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով գործակալությունից առաջին դիմումի հիման վրա ստացված տեղեկատվությունը:

16. Սույն կարգի համաձայն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կարող է դիմել լիազոր մարմնին մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը՝ ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

28.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ